ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԸՌԱՋ

ՀԱՆԴԻՍԱՏ ԱՄԵՆ. Տ. ԴԱՄԻԱՆՈՍ ՅՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Յունաց Երուսաղէմի Պատրիարքը՝ Ամեն. Տ Դամիանոս վախճանեցաւ Օգոստոս 14ին, Ուրբաթ օր, իր 84 տարեկան ալեւորեալ հասակին մէջ, ատրճանակեան կիրաւեալ։

Հանգուցեալ Պատրիարքը եղած է յարատեւ կորովի կրօնապետ մը, 1922ին, իր գահակալութեան 25ամեակի տօնախմբութեանց առթիւ, Անգլիոյ Թագուորէն ստացած է K. B. E. (Ասպետ Բրիտանական Դիւրութեան) տիտղոսը (որ հոր տարի ետք հանգուցեալ Դուրհամ Պատրիարքին ալ շնորհուեցաւ)։ Իր օրով, Անգլիական կառավարութեան կողմէ Տընտեսական Յանձնախումբ մը Յունաց Վանքին մատակարարութիւնը ձեռք առաւ, Պատրիարքարանին մեծագումար պարքերը մարելու նպատակաւ։

Երջանկայիշատակ Պատրիարքը Հայոց Վանքին և Միաբանութեան հետ հաշտ և սիրալիր յարաբերութիւններ մշակած է։

Թաղման կարգը տեղի ունեցաւ 15 Օգստ., Շաբաթ կէսօրէ ետք ժամը 3ին, Յունաց Վանքի Ս. կոստանդիանոս և Հելինէ եկեղեցւոյն մէջ։ Հանգուցեալ Պատրիարքը հանդիսական փառաւոր զգեստներով նստեցուած էր աթոռի մը վրայ, փողաւոր ի գլուխ։ Հոգեւորական և պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու կարգին, Պատրիարքարանին կողմէ ներկայացան Գերշ. Տ. Մկրտիչ Եպս. և Հոգշ. Տ. Տ. Գէորգ, Սուրէն և Պարգեւ վարդապետներն ու Դիւանապետը։

Օծման արարողութիւն չունի Յոյն եկեղեցին. հետեւաբար, եկեղեցական դասը ննջեցեալին ձեռքերն ու ճակատը համբուրելէ ետք՝ դուռը բերին պատարագեցին և ապա յուղարկաւորութեան թափորը։

Երբ թափորը մեր Վանքի ուղղութեամբ ելաւ հասաւ՝ ննջեցեալը, որ տարբերաւած էր աթոռին վրայ, և նստած դիրքով խաղաղ դիմագիծ մը ունէր, դրուեցաւ վար, և Պարտ. Տեղապահ Տ. Մեսրոպ Սրբազանին գլխաւորութեամբ, զգեստաւորեալ, և վարդապետ և տարեւագներով, հանգստեան կարգ կատարուեցաւ, որուն համար Յունաց Տեղապահը մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց։

Ապա թափորը ուղղուեցաւ Սիոնի Յունաց գերեզմանատունը, և հոն ննջեցեալը ամփոփուեցաւ մասնաւոր գեղեցիկ դամբարանի մը մէջ, նստած վիճակի մէջ դրուելով դամբարանին մէջտեղը, որուն մուտքը ապա կամարով ծածկուեցաւ։

(«Սիոն», 1981, Ե. Տարի, Սեպտեմբեր, Թիւ 9, էջ 284)։

ԵՐԿՈՒ ՄԻԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ ԱՆԳԼԻԱ ԿԵՐԹԱՆ

Նախկին Կիլիկիոյ Ընդհանրական Մեծանուն Բարեբարին փոխանակ համաձայն, Ս. Աթոռոյս Տնօրէն ժողովին կողմէ որոշուեցաւ որ երկու վարդապետներ, նոյն Ընդհանրատարներէն, Անգլիա զրկուին երկու տարի, ատուածաբանական հիւղի բարձրագոյն ուսմանց հետեւելու նպատակաւ։

Ըստ այսմ Տնօրէն ժողովը որոշեց Լոնտոնի Քինկզ Գոլէճը զրկել Հոգշ Տ. Տ. Սերովբէ Մանուկեան և Շաւարշ Գուլումճեան վարդապետները։

(Նոյն, էջ 287)։

Ն ԻՐ ԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ամմանի ազգայիններէն Կիւրինցի Մեծայարգ Տիար Սերոբ Անթիքճեան, տեղւոյն լուսագոյն մէկ թաղամասին մէջ գեղին մը գնած ու բարեսիրաբար նուիրած է Ազգին, յառաջիկայի այդտեղ եկեղեցի և դպրոց կառուցանելու համար։

Ուրախալի է որ Ամմանի հայ գաղութալ, որ պարբերական այցելութիւններով անշուք տան մը մէջ միայն հոգեւոր պաշտամունքներ կրնային վայելել, պիտի այսուհետև ունենայ իր չէնքը՝ իր սեփական տան մէջ զետեղուած փառաւորելու համար։

(«Սիոն», 1981, Ե. Տարի, Հոկտեմբեր, Թիւ 10, էջ 320)։

digitised by A.R.A.R.@